ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արմեն Գևորգյան, ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2023 թվականի սեպտեմբերի 27-30-ը

3. Հրավիրող կողմը

Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

* Մասնակցություն Մոսկովյան ֆինանսական ֆորումին՝ սեպտեմբերի 28-ին, և
* ՌԴ ՖՆ նախաձեռնությամբ՝ հանրային ֆինանսների կառավարման առաջատար փորձի և առկա ֆիսկալ մարտահրավերներին նվիրված պանելային քննարկումներ:

5. Քննարկված թեմաները

Պլենար նիստին՝ Նոր հավասարակշռություն որոնումներ՝ Ռուսաստանի ֆինանսական և տնտեսական համակարգը համաշխարհային վերափոխման ժամանակաշրջանում

Երկար փողեր. խնայողություններ ու ներդրումներ,

- Ֆինանսական գրագիտությունից դեպի ֆինանսական մշակույթ: Ռազմավարություն 2030
- Տարածաշրջանային ֆինանսների զարգացման հետագիծն արդի իրականությունում,

- Ռուսաստանի Դաշնության բյուջետային օրենսգրքի 25 ամյակ. ռեսուրսների բաշխումից մինչև արդյունքների կառավարում,
- Բյուջեի ծախսերի արդյունավետության և արդյունավետության բարձրացման գործիքների կիրառման առանձնահատկությունները,
- Հանրային սեփականության արդյունավետ կառավարում,
- Պետական ֆինանսների կառավարման թվայնացման արդի միտումներն ու առանձնահատկությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումի ընթացքում ներկայացվել է «ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության ժամանակակից համակարգը և գործիքները» թեմայով զեկույցը, որի նվիրված էր ՀՀ ֆինանսների նախարարությունում հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության և կանխատեսման համակարգի և գործիքների նկարագրությանը, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի կայունության և հարկաբյուջետային կանոնների վերաբերյալ ՀՀ ՖՆ կողմից իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքներին: Ելույթից հետո ծավալվել է քննարկում վերոնշյալ հարցերի վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Միջոցառման ընթացքում երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարի տեղակալներ Տ.Մակսիմովի, Ա.Լավրովի, Վ.Կոլիչևի, Ուզբեկստանի ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Խայդարովի գլխավորած պատվիրակության, Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Շիրոկովի, ինչպես նաև ջերմ շփումներ՝ ՌԴ ֆինանսների նախարար Ա. Սիլուանովի և ՌԴ ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի (НИФИ) տնօրեն Վ.Նազարովի հետ, որոնց ընթացքում քննարկվել են արդի երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Շարունակել ակտիվորեն համագործակցել և աշխատել ս.թ. օգոստոսին ուժի մեջ մտած՝ եռամյա Հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության ոլորտում ՀՀ ՖՆ և ՌԴ ՖՆ երկկողմ համաձայնագրի շրջանակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հոկտեմբերի 4, 2023թ.

Ա.Գևորգյան